

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Ե. Բ. Ե. Մ. Ի. Ա. ԱՌՈՐԻՒՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

ՀԱԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ. ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԱ-

ՑԻՈՑ⁽¹⁾ ԵՒ ՎԱՍՆ ՆԻՄԻԲԻՆԱՑԻՈՑ⁽²⁾

ՈՐ ԶԳԵՑԱՆ ԽՈՐԳՍ

Մեծ է բարկութիւնն որ եղև յընկերս⁽³⁾ մեր: Մեծ է վաստակ որ եղև յեղբարց մերոց: Արժան իսկ էր զի ըստ համբաւին եղիցի վաստակ այն: Ըստ կարեւոր մեծ վշտին, եղիցի եւ սուգն սաստիկ: Իբրև ի վերայ մեռեալ եղբարց ձերոց, թուխս սգոյ զգեցայք, բայց ոչ հանդերձս թուխս զոր զգենուն սպածք⁽⁴⁾ վասն մեռելոց, խոր-զըք⁽⁵⁾ զգեցայք վասն սգոյ մաւրն որ չողաւ ծննդովք իւրովք իբրև ամենեւին⁽⁶⁾ սուգ միջոյ են նորա կողմանքն ընտրողութեան⁽⁷⁾: Ամենայն ոք ի սուգ էր միաբան ի վերայ զուգակցի նմանեոյ իւրոյ: Սեղանն մեր տրտմեցաւ խորզովն վասն սուրբ սեղանոյ նոցա: Գլուխ ժողովրդեան այս, սգացաւ վասն ժողովրդեանն, եւ զլիսոյ ժողովրդեանն: Եւ նոյնպէս մի ըստ միոջէ, սգացան վասն նմանեոյ իւրեանց: Երիցունք վասն երիցանց, եւ սարկաւագունք վասն սարկաւագաց: Զգաստ կանայք վասն ըզգաստից, եւ ուխտ այս վասն ուխտի նոցա: Դատաւորք վասն դատաւորաց զգեցան խորգ ի հրապարակս: Հաշտեցուցին խորգովքն զԱստուած, զի պահեսցէ չէն ըզհրապարակս: Սգացաւ ռամիկ վասն ռամիկի, եւ գլխաւորք վասն գլխաւորաց: Թըխացայք յայտնի արտաքուստ, սպիտակա-

ցայք նովուա⁽¹⁾ ի ծածուկ: Խորգքն որ թըխացուցին արտաքոյ, սպիտակացուցին ըզհերկուածս ի⁽²⁾ ներքոյ: Մոխիր որ տգեղացոյց զմարմինս, յաճախեաց զգեղեցկութիւն հոգւոյ: Զուարթացոյց զոգի ի ծածուկ, որ զգացեալ էր յայտնապէս: Ահա պահովք զիրացայք եղբարք, եւ աղաւթիւք լուացէք զաղտ ձեր: Այս սուգ զուարթակն, խրախտութիւնք էր ծածկապէս: Զի ճարակ եղև մեղ պահք, կերակրեցա՛ք նովաւ զոգիս մեր: Ոչ ուրախ եւ զէք ի խրախտութիւնս ձեր, որպէս ուրախ եղէք ի պահս ձեր: Ետուն խորգն զգենելաց իւրեանց պատիւ առաւել քան զհանդերձից: Ոչ պատուեցին զմեղ այսպէս հանդերձք: Ոչ զարդարեցին այնպէս գոյնք: Ծանուկացին սպիտակք եւ պատիւ խորզովն եղև մեղ: Նոքա պատուեցին⁽³⁾ ի պաշարմունս, եւ ոչ թշնամանեցին զմեղ զերիչք: Առաջի թագաւորաց եւ իշխանաց պարսից, պատիւ խորզով եղև մեղ: Կերպաս եւ բեհեզ թշնամանեցին զգեղեցաւս իւրեանց զի պարտեցան: Խորգք յաճախեցին զպատիւ զգենելաց իւրեանց, զի առաքինեցան: Զնինուէ ոչ պատուեցին հանդերձք իբրև զխորգն զոր զգեցաւ: Ոչ զուարթացուցին զնա եւզք անուշունք, որպէս զուարթացոյց մոխիրն երեսաց: Քաջըր է Աստուծոյ դեղն զոր ստացաւ ի մոխրոյ: Եւ ոչ անուշացուցին զնա⁽⁴⁾ խունգք, իբրև զաղտն որ ել ի նմանէ: Լուացումն ջրոյ վնասեաց նմա, խոնարհումն եւ աղտ զտեցին զնա առաւել քան զծիրանիս: Խորգ պատուեաց զթագաւորն Նինուէի առաւել քան զկերպաս: Խորգ եւ պատիւ Աքարու, յաճախեցին անարգանք իւր ի ծիրանիս,

(1) Օր. վրիպանօր գրէ Նիկոմացուց, յորոյ վերայ զնէ ուղղիչն՝ իոյ:

(2) Օր. ունէր Նիմիբնացուց, յորոյ վերայ յաւելու ուղղիչն՝ ի:

(3) Օր. գրէ՝ յնկերս:

(4) Ազածք չիք ի քառգիրս, եթէ չէ՝ ինչ վրիպակ գրէի, փխկ. սգագզածք:

(5) Օր. ունէր խորգ, յետոյ ուղղեալ ի սրբազրէն:

(6) Օր. ունէր ամենիւն, ուղղիչն յաւելու եւ:

(7) Յայտնապէս աղաւաղեալ է անդիս:

(1) Այսպէս յօրինակին:

(2) Ներկուածս ի յաւելեալ յուղղիչն ի լուսանցս:

(3) Օր. ունէր պահեցին, յետոյ ուղղեալ յաւելմամբ ու ի վերայ տողին:

(4) Ուղղիչն զնէ ի վերայ տողին նա:

Պատուեցան խորհով անարգանք նորա: Եւ թշնամանել զնա Եղիայ, ընթացաւ խորզն եւ արգել: Ո՛ր խորզ քանի՛ պատուական եւ, զի պատիւ թագաւորաց լինի քեւ: Ո՛ր թագ թէպէտ եւ մեծ եւ ոչ պատուեցար առանց խորհոյ: Ո՛ր մոխիր քանի առաքինի եւ, զի զերեւ շնոյ լուսաւորեցեր: Ո՛ր պահք զի մեծ է աշտիճան քո, զի մինչեւ ի բարձունս հասանէ: Ո՛ր ազաւթք քանի իշխես, զի զբանալի բարձանց ունիս: Մերկացաւ Եղիկիայ զհանգերձն իւր, զգեցաւ խորզ եւ պատուեցաւ: Թշնամիք չուրջ էին զնովաւ, խորզ պատուական պատուեաց զնա: Ոչ ժպրհեցան թշնամանք նախովրոյ մերձենալ ի հանգերձն խորհոյ: Կտաւ խորզ Սլոմիի թշնամանել զԱսորեստանեայն: Ոչ կարացին անարգանքն Պարսից թըշնամանել զքաղաքս մեր: Խորզ պատուական զգեցաւ, եղև նովաւ պատուական յոյժ: Եթէ զայսպիսիս պատուես, ո՛ր ոչ ապաւինեսցի ի քեզ: Ոչ թշնամանեցին գերեմարք զզգաստ կանայս վասն խորհոյ առաւել քան զայլ քաղաքս մեր: Ո՛ր գլուխ զխորզ եթէ զինչ է, նովաւ պատուեցան պարիսպք մեր, զոր թշնամանեցին արտաքինքն: Թըշնամանեցին պիղծքն եւ թշնամանեցան, զի քաղաքս խորհով պատուեցաւ: Եկին ծովք եւ պարտեցան ի խորհոյ: Կանգնեցան բլուրք եւ խոնարհեցուցին զնոսա: Եկին փիղք եւ պարտեցան, խորհով, մոխրով, ազաւթիւք: Եկին աղեղնաւորք եւ վերաւորեցան, զի զգեցեալք խորհով յաղթեցին նոցա: Եկին կուղէնք⁽¹⁾ արտաքինք, եւ պարտեցան ի ներքին խորհոյ: Աղեղն որ արտաքոյ պարսպի, յաղաւթից որ ի ներքս պարտեցաւ: Ոչ կարաց թշնամանել Հայման զխորզն Մուրթէի առաքինոյ: Բայց զարձաւ խորզն թշնամանեաց զծիրանիսն Հայմանայ մահապարտի: Արդ զի գլխացէք եթէ զինչ է պատիւ խորհոյ, ի պաշարմունս փորձեցէք: Զի պատուեցան նովաւ անարգանք ձեր: Փորձեցէք զնա ի պատերազմունս, զի պատուեցան նովաւ պարիսպք ձեր: Ապաւինեցայք ի նա այժմ, զի գլխացէք թէ զինչ է ոյժ նորա: Հանգերձն անարգանս հառուն մեզ, զի⁽²⁾ զբարձրութիւն պաշտեցաք նո-

քաւք: Խորզ որ առեաց զբարձրութիւն, պատուեցին նովաւ խոնարհք: Հրեշտակք ուրախ եղին ընդ պատին, զի պատուեցին զմեզ խորզք առաջի նոցա: Դեւք երկեան եւ տեղի հառուն, սարսեցին ի խորզ զպաժացն⁽³⁾: Ոչ երկեցուցին զմեզ կողէնք⁽⁴⁾, որպէս երկեցուցին խորզք զդեւ: Տեսին զմեզ դեւք եւ երկեան, զի պատանաղէնս համարեցան: Եւք զուք երէկ ի դաշտն, եւ արէք⁽⁵⁾ ընդ նոսա պատերազմ: Սակաւ էր տեղի ի քաղաքիս ճակատելոյ զնդից ձերոց: Ի ճակատեալն⁽⁶⁾ ընդարձակ ելէք, եւ առէք անդ զպսակ մեծ: Ի զլուս ճակատուց ձերոց երթայր քահանայ որ եղև զաւրազլուս: Ծերութիւն հովուիս մերոյ, երթայ պատերազմանց⁽⁷⁾ քան զմանկութիւն իւր: Զի յայտմ ծածուկ պատերազմի, մանկութիւն յաղթեալ լինին⁽⁸⁾, զի ընդ ցանկութեան է մարտ իւր: Վասն այնր յաճախէ ստանդուծն իւր: Յայն սակաւ ձերութիւն պիտոյ է, տկարութիւն նորա կարէ յաղթել: Ո՛ր պատերազմ սքանչելի, զի տկարութիւն պիտոյ է նմա: Յամենայն մարտս զաւրութիւն վայելէ, եւ յայտմ տկարութիւն զաւրութեան: Բայց քո մանկութիւն ո՛ր ձեր, առ պսակ պարկեշտութեամբ: Եւ ձերութիւն քո ո՛ր զգաստ, ա՛ռ մեծ առաքինութիւն: Ուրախ արարին երկրքին ըզմիմեանս մանկութիւն եւ ձերութիւն քո: Առաւել սարսեաց չարայն, զի հաւս թէ ո՛ր է զաւրազլուս մեր: Երկրորդեաց չարն առ զաւրս իւր, զպատերազմ զոր արար մանկութիւն քո: Յայտմ առաւել խռովեցան, զի միայն պարտեցեալ զնոսա: Երկեան զի տեսին զբանակս քո զգեցեալ ամենեքեան զպատենաղէնս: Եթէ մինչ միայն էիր յաղթելիր ո՛ր յաղթէ քեզ ընդ բազումս: Ել արտաքս բանակ քո յասպարէս ծածուկ արշաւանի: Էին ընդ նոսա ազաւթք ազաւթք⁽⁹⁾, եւ խնդրեաւք խաւսունք: Խոնարհին յդանալ զձայնս իւրեանց, եւ սարգի ձգել զնոսա իւրեանց: Եւս որ ի նոցանէն ելանէր էին ընդ նոսա եւ պահք սուրբք որ ոչ երբեք

(1) Զի ի բաղկիւս:

(2) Թուի թէ = կուղէնք (տե՛ս վերագոյն):

(3) Այսպէս յօրինակին, = արաւէ:

(4) Զի ի բաղկիւս, = ցակաւեղ:

(5) Անտղորակն կազմութիւն:

(6) Այսպէս յօր:

(7) Այսպէս կրկնեալ յօրինակին:

(1) Բառ ինձ անձանթ, Թուի թէ = կուղէնք (տե՛ս խոնարհագոյն) = կողք, կողմն:

(2) Զի յաւելուած ուղղյին:

բթին: Եւէք ի տեղին յորում եղեալ են պատերազմողքն առաջինք: Ետես զնոսա սատանայ եւ ճշեաց, զի յիշեալց զցաւ նետից նոցա: Մինչ ցայսաւր կայ ի բերան նորա ճաշակ տանջանայ նոցա: Իբրեւ յաղթեցանն յաղթեցին: Կոտորեցին իբրեւ կոտորեցան: Պարտեցաւ անդ չար այն, զի եւ կանայք յաղթեցին նմա անդ պառաւունք: Եւ աղջկունք ձայնիւ աւրհնութեան խափանեցին զստութիւն: Լցա՛ն զաշտք յաշնան ծաղկաւք յանկարծակի: Ո՛չ զարգարեցին ծաղիկք զվայրս որպէս դուք զարգարեցէք զնա: Ընդ բարբառս եւ ընդ խորզս ձեր, ուրա՛խ եղեն երկինք եւ երկիր: Զքաղաքս խորզովք զարգարեցէք, եւ զգաշտս բարբառով շինեցէք: Հատուցէ ձեզ Տէրն շինութիւն եւ խաղաղութիւն: Ի հրապարակս սաստեցէ բարկութիւն զի մի՛ զիմեցէ: Նահանջեցէ՛(¹) զնա զի մի արշաւեցէ: Դադարեցէ ի ձէնջ ստուգութիւնն, զի մի՛ ընթերցցի զկշտամբոսն ձեր: Մի՛ վերացցի ի պարսպաց ձերոց ողորմութիւնն որ է պարիսպ ձեր: Որ առանց զնոց ետ զկեանս, եւ առանց փոխանակի զողորմութիւնս, պարգեւ ձրի հաւապալ կարկառէ զլացութեանն(²) մերում: Լուծցէ զխորզս սեղանոյ իւրոյ, զի չքեղասցի սեղանն սրբութեան: Բաւական են նմա պարշարմունք(³) յորս եղև մեղ տէր սգոյ: Եքեղացի եւ զուարթացուցէ(⁴) զգոյն իւր, հանդէպ երեսաց պաշտանէից իւրոց: Լուծցէ եկեղեցի զհանդերձ սգոյ, զի ի խաւսմանէ ցանկալի փեսային այլաւք(⁵) զարգիւք զարգարեցին: Պահովք, հսկմամբ եւ աւրհնութեամբ հաճոյ լիցի նմա որպէս նա սմա, ծածուկ եւ յայտնի զարգուք: Դատաւորաց հատուցէ երանութիւն, եւ գլխաւորաց զբարութիւն: Զի խոնարհեցա՛ն ի ժամ բարկութեան: Բարձրացուցէ՛ ի շէն ժամանակի, զիցէ առաջի նոցա ստուգութիւն, եղիցի նոցա իբրեւ զլշուս, նովաւ կշռեցեն զդատս իւրեանց, զոր ոչ կարէ կաշառ տատանդիւ: Նմանեցեն ներքին դատաւորքս, այնմ վերին դատաւորին: Եթէ պահանջեցին վասն ստուգութեան, եւ եթէ ողոր-

մին վասն սիրոյ: Աւրհնեա՛ զոսմիկս ի վաստակս եւ ի գործս, եւ ի գլխաւորս, ի կարգս եւ յաշտեմանս: Աւրհնեա՛ զանմեղս, որոց եղեն լեզուք նոցա(¹) իբրեւ զքնարո: Աւրհնեա՛ եւ զսգաստ կանայս, որ յայրատեցան վասն սիրոյ քո: Զի աղաղակէին ի մէջ սրահից եւ աւրհնէին ի հրապարակս: Սկեցին եւ աղաղակեցին ի գիշերս ի մէջ հրապարակաց սրբապէս: Կու՛թք որ ի դերեւ եւ լին վասն քո, յաճախեա՛ ի նոսա զաւրհնութիւնս քո: Եղիցին հնձանք նոցա ողջունիւ, եւ ըմպելի նոցա ի խրախութիւնս: Հատոյ Տէր շինումն երկրիս մերում, ընդ միոյ հարեւր քան զշարժումն իւր: Պահեա՛ ի զլուս մեր զհարս մեր, եւ ի մէջ խաշին քո զհոգիւս մեր: Որ սկեցին եւ վաստակեցին ի հաւաքո, զիրացուցին պահովք զխաշն քո, կացցեն ի զլուս նորա սրբապէս: Եղիցին պարիսպք ընդ երեսաց գայլոց: Բնակեցոյ ի բերանս նոցա զաւրհնութիւնս քո, եւ ի ձեռս նոցա զքաւութիւն: Ի շրթանց նոցա աւրհնեցուք, եւ աջով նոցա քաւեցուք:

Վանճաւ գրչի ողորմա Քրիստոս:

ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ(²)

Քաւեա՛ Տէր ողորմութեամբ քով բզբերան այս որ ժպրհեցաւ խաւսել զշափոյն որ չէ աւրէն: Եթէ ասացին ի մարդկանէ ո՛ր եղիր չափ պարտուց մերոց: Ո՛ր զիցէ չափ ողորմութեանց քոց: Յանդգնեցաւ Տէր ժպրհութեան մեր, զի զաւրացաւ հարուածք ի զարուս մերում: Քննել թէ զիտ՛րդ եւ ընդէ՛ր կործանեցան քաղաքք բարկութեամբ: Բայց զի ոչ բաւեցի բաւանդակել, թէ ո՛ր պատճառ հարուածոյն, ահա ասացի բազումս, զի ոչ բաւեցի ասել զմի չափ մեղաց եղբարց: Մեղաւոր ընու զնա, ամպարիշտ զեղու զնա: Ապաշխարող թափէ զնա: Զափէ եւ ինքն ստուգութիւնն, իբրեւ չիք չափ որ եւանէ ընդ նմա: Առին նովաւ չափ բարկութեան, ըստ չափոյ անաւրէնութեանց: Զեղու ըստ ամպարիշտ(³) այն, եւ թերանոյ ըստ ամպաշխարողին: Որոյ չափ իւր զեղաւ, հեղու յեր-

(¹) Օր. գրէ ցահանջեցէ:

(²) Լացուրիւն պակասէ ի բառգիրս:

(³) Պարտաւումն պակասէ ի բառգիրս:

(⁴) Օր. վրիպանօր գրէ՝ զուարթացուցէ:

(⁵) Անկանոն հոլովումն:

(¹) Փոխանակ ցոցա յաւելու ուղղիչն ի լուսանցս՝ իւրեանց:

(²) Օր. գրէ՝ Նիկոմիդեա:

(³) Ի՛ յաւելեալ յուղղչէն ի վերայ տողին:

կոսին. աշխարհս տանջի: Աստ պահանջի
 զեղուսն չափոյն, եւ ի վախճանի լիութիւն
 նորա: Զեղու բարկութիւն ստուգութեանն
 ի վերայ չափոյն որ զեղաւ եւ հեղաւ: Հե-
 ղու զըզեղուսն իւր ի վերայ զեղմանն, եւ
 զէութիւն իւր ի վերայ լիութեանն: Ա-
 նուամբք իւրեանց ճանաչին մեղաւորն եւ
 ամպարիշտն: Փոքր է անուամբ մեղաւորն
 քան զամպարիշտն յորջորջմամբ: Մեղաւորն
 մեղանէ եւ կասկածէ, ամպարիշտն ամպա-
 րիշտէ եւ յանդգնեալ է: Ապաշխարող
 յանցանէ եւ սգացեալ է: Արդար հարկանի
 եւ զուարթ է: Մեղաւորն քանզի կասկա-
 ծոտ է, ոչ զեղու չափ իւր առ խիթաւն:
 Ամպարիշտն քանզի յանդգնեալ է, զեղու
 չափ իւր հպարտմամբ⁽¹⁾ նորա: Դարձեալն
 յանցեալ եւ սգացեալ է: Լնու զչափ իւր
 մեղաւք իւրովք, թերացուցանէ զնա ապաշ-
 խարելով: Թափէ զնա դարձիւ իւրով: Է-
 որ հարաւ վասն զի չափն իւր զեղաւ եւ հե-
 ղաւ: Եւ է որ հարաւ վասն զի զովեացի
 հաւատ նորա: Են որ հարան ի գանս իւր-
 եանց, թաղեալ են աւգնութիւնք իւրեանց:
 Հարուածք են աւգնութեան, ի խրատչէն
 ընտրողութեան: Մեղաւորն որ մեղանէ եւ
 խիթացեալ է, եթէ հարկանի ոչ իւրեւ բար-
 կութեամբ: Ամպարիշտն⁽²⁾ որ ամպարիշտէ
 եւ յանդգնեալ է, յուսահատութեան է հա-
 րուածն իւր: Մեղաւորն զի միջին է, ելից
 զչափ մեղաց իւրոց: Ոչ եղիզ զնա իւրեւ
 զամպարիշտ, եւ ոչ թափեաց իւրեւ զդար-
 ձեալն: Նա եթէ հարկանի, աւգուտ ծած-
 կեալ է ի գանն իւր: Փոխանակ անձին եւ
 ընկերի հարկանի, զի եղիցի ի մէջ աւգու-
 տն: Եթէ յերկուց մեղաւորաց⁽³⁾ մին
 հարկանի, զի միւսն երկիցէ: Իրաւունք են
 այս առ Աստուած, զի ի մէջ եղիցին աւ-
 գուտ նոցա: Զի եկեացէ գան հարկոյն, եւ
 դարձ այնր որ երկեան: Դիցին ի մէջ հա-
 սարակաց, եւ բաժանեացին ի մասունս,
 զի կողմանք են բազումք: Արդարոց եւ
 ապաշխարողաց, եւ մեղաւորաց եւ ամպա-
 րիշտոց, եւ ի վերայ ամենեցուն զոյ գա-
 ւաղան: Մի վասն զի խառնակեալ են գանք
 ամենեցուն ի միջի: Կարծեսցուք եթէ ար-
 դարն որ հարաւ, իւրեւ զանաւրէն է որ

տանջեցաւ: Մի հայեցուք ի հարուածն,
 աշխարհս հարկանելոյն: Եթէ բարկու-
 թեամբ հարկանէ, կորստեան է: Եւ եթէ եր-
 կիւզ արկանելով, ողորմութեան է: Ամպա-
 րիշտն բարկութեամբ հարկանի, թէպէտ եւ
 աւգուտ է ընկերաց յուսահատութեամբ
 հարկանի: Թէպէտ եւ աշույց յոյս յաճախէ,
 չիք նմա հոտ խթի եւ ոչ չոգի ապաշխա-
 րութեան: Սատանայի նմանէ ամենեւին⁽⁴⁾ որ
 աւտար է յապաշուելոյ: Եւ զոր աւրինակ
 զի զմեղաւորս հարկանէ, զի երկեցուցէ
 զմեղաւորս: Նոյնպէս հարկանէ զարդարս,
 զի առաւել երկեցուցէ զանաւրէնս: Զի
 օճցէ զմտաւ անաւրէնն, թէ արդարն հա-
 րաւ անյանց, յոր ապաւինութիւն փախի-
 ցէ մեղաւորն եթէ ոչ գառնայ⁽⁵⁾: Թէպէտ եւ
 յոյժ ասացի եւ ասեմ, ոչ բաւեցի հասա-
 նել չափոյն եւ կշռոց ամենայն աւգաւից
 որ են յԱստուծոյ յամենայն գանս: Զի է
 ուր հարկանէ զչարս, զի ցուցցէ նոցա
 զստուգութեանն իւր: Եւ է ուր ողորմի չա-
 րաց, զի ճաշակեցուցէ նոցա զչնորան
 իւր: Զի հարկանելովքն⁽⁶⁾ ուսուցէ թէ ա-
 մենեքեան արժանի են դանի: Եւ կեցու-
 ցելովքն ծանուցէ, թէ ջանայ⁽⁷⁾ ընդ նոսա
 թէպէտ եւ չարք են: Եթէ մինչ չարք են
 սիրուն են նմա, քանի՜ եւ եղիցին սիրունք
 չնորհիւ ստուգութեանն նորա յորժամ ար-
 դարք եւ բարիք իցեն: Եթէ մինչ կերպա-
 րանքն սատանայի նկարեալ է ի նոսա,
 ոչ աւտարացայց, յորժամ նմա եղիցին նը-
 մանող, քանի՜ եւս սիրէ զպատկեր իւր:
 Զէ կապեալ աւրէնսդին, սիրով իւրով
 լուծանէ զաւրէնս: Ողորմի եւ չարաց, եւ
 խառնայ⁽⁸⁾ առ բարիս: Սատանայ եւ չար-
 չարէ զստոյզս, որպէսզի ուսուցէ զանաւ-
 րէնս: Թէ արդարն իւրեւ զրկեալ է սիրէ
 զնա, եւ չարի⁽⁹⁾ իւրեւ առեալ է ուրանայ⁽⁷⁾
 զնա: Խրատիչ է նա ընտրող, ընդ գաւա-
 րանի իւրում է խնայուսն: Անդր ուղղէ
 զգաւազանն ուր հայի աւգնութիւն իւր:
 Բայց եւ իւրեւ ի խաւարի զննեցի զսոսա
 զոր պատմեցի: Ուղղեցայց ելից ի խաւարէ,

(1) Օր. գրէ վրկաւորս՝ ամենին:

(2) Օր. գրէ՝ դաւանա:

(3) Անտոյորական կազմութիւն, որպէս է ուրիւ ի վերագոյնս:

(4) Օր. գրէ՝ ջանա:

(5) Օր. գրէ՝ խառնա:

(6) Օր. ունէր չար, յորոյ վերայ դնէ ուղղին ի:

(7) Օր. գրէ՝ ուրանա:

(1) Պակասէ ի բառգիրս:

(2) Օր. գրէ՝ աւագաւան:

(3) Մեղաւորաց յաւելեալ ի լուսանցս ի ձեռն ուղղին:

ի հանդիպութիւնն զրոց լուսոյ: Եհար զՍո-
ղոմացիս, զի հեղաւ զհեղաւ չափ այն: Ե-
ղեւ երկիր ի վերայ չարեացն, զի ոչ ժուժ-
եաց լինել ի ներքոյ: Բողոքեաց երկիրն որ
ընդ նոքաւք, առ դատաւորն որ ի վերոյ
քան զնա: Բառնալ ի նմանէ զհետսս նո-
ցա, զի եղեն ծանր ի վերայ նորա: Իսկ
Գաղիլեացիքն որ կոտորեցան, հարան
վասն մեղաց իւրեանց, եւ հարան վասն
ընկերաց: Զի երկիցէ մեղաւորն ընկերաւ
իւրով: Քաղաքն որ այժմ կործանեցաւ,
ի մեղս իւր ասնն եղծաւ: Մին միայն եւ
եթ զիտէ զինչ է պատճառ կորստեան նո-
րա, ասելով թէ պիղծ տեղի էր ո՛չ տան
թոյլ եկեղեցիք նորա: Ասել թէ սուրբ տե-
ղի էր, ո՛չ տան թոյլ եղծուածք նորա: Որ
կայ իմէջ ալեաց, յամենայն կողմանս վա-
րի յորժամ եղիցին հարկանել զընա ամե-
նայն ալիք յամենայն կողմանց: Երեք
բանք են որովք բովանդակին ամենայն
խորհմունք մեր թէ զիարդ եւ վասն էր
եկն ի վերայ նոցա տաղնապն: Եւ ի զրոց են
նոցա վկայութիւնք երեցունց⁽¹⁾: Զի երեք
են զիտակ եմ, իսկ եթէ ո՛ր յերկնց է, ո՛չ
զիտեմ: Եթէ վասն նորին ամպարշառու-
թեան հարան Սողոմացոցն նմանող են: Եւ
եթէ վասն միջոյ անաւրէնութեան հարան,
Գաղիլեացւոցն նմանեղ⁽²⁾ են: Եւ եթէ յա-
ռաջ քան զնեղութիւնն ինչ, վաղվաղեաց
Բարերարն եւ ժողովեաց զնոսա, Յոշիա
արքային նմանող են, որ վշտիւ իւ-
րով փախեաւ ի վշտէ: Եթէ զի ամպարըշ-
տեցան քան զամենայն, եհար զնոսա,
եղիցի մեղ այս ի զգուշութիւն: Եւ եթէ ե-
հար զնոսա իբրեւ մեղ նմանեն, եղիցի
մեղ այս ի լալումն: Եւ եթէ եհար զընոսա,
զի մեղան քան զամենայն, եղիցուք խի-
թացեալք եւ զգուշացեալք: Եւ եթէ ե-
հար զնոսա իբրեւ մեղ նմանեն, եղիցուք
փո՛յթք եւ ապաշխարողք: Եւ եթէ նախ
քան զբարկութիւն ժողովեցան, եղիցուք
սգացեալք եւ տրտմեալք: Նոցա այսուհե-
տե քուն խաղաղ, եւ մեղ արհաւիրք հաշ-
ման: Արասցէ Բարերարն ողորմութեամբ
իւրով զի⁽³⁾ յերկնց զոր ասացի, առաջինն
եւ վերջինն խափանեցին, եւ միջինն եւ

եթ ստուգեցի: Առաջինն ամպարշառու-
թեան մեծի է, եւ վերջինն խիստ բարկու-
թեան: Միջինն աւղտի հասարակաց է:
Նոցա վարձ եւ մեղ չափ, եթէ հարան
վասն ամպարշառութեան նոցա եւ բեկման
որ եթէ նախ քան զբարկութիւն ժողովե-
ցան, մեղ է բեկումն որ զալոց է: Իսկ
եթէ եղեն ի սքանչելիս, զի մեք յաճա-
խեցուք յապաշխարութիւն: Մեք որ ար-
գարացաք, շնորհեցաք, եւ նոքա որ հա-
րանն ոչ վնասեցան:

ԿԱՏԱՐԵՑԱՆ ⁽¹⁾ ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՅՈՒԱԾՔ ԱԲԲԱՅ ԵՓՐԵՄԻ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ⁽²⁾ ՔԱՂԱՔԻ:

Եւ Յովնաննիս ղեռարոյս ի գրչաց, Տեառն
իմ⁽³⁾ հրամանաւ Ներսիսի իմոյ դաստիարակողի
եւ զիս յաստուծայինսն ձգաղի սկսայ գողթս
զայս եւ զոգեչան բանս սուրբ հաւառն մերոյ
Եփրեմի գոր սասցեալ ե վասն Նիկոնիկեայ⁽⁴⁾
խաղաքի եւ կասարեցի: Արդ որք ընթերցոյ՞ զսս
յիշեցիք ի Քրիստոս զհրեւ Ներսիս գաւորս եւ զըն-
տիր եւ զսիւսեանական վարդապետ, ընդ նմին եւ
զաստուծաւոր մայր իւր սիկեաց սիկիմ Շահան-
դախոս կոչեցեալ. եւ զհարապսս իւր զՀերոմ
Սեւաստ եւ զԱյսիւրոս եւ զՇահնեչան եւ զԻրի-
գոր. եւ Աստուած ձեզ ողորմեցի:

⁽⁵⁾ Եւ զգրիչս յիշեան արժանի արարիքի:
Եւ զաշխատոյս ի յաղղելս:

Հապարակեաց Յ. Յ. Մ.

Վ. Ա. Խ. Ճ. Ա. Ն.

⁽¹⁾ Օր. գրէ՝ երեցունց:
⁽²⁾ Պակասէ ի բառգիրս, — եթէ չիցէ վրիպակ
գրչին:
⁽³⁾ Օր. ունէր՝ զ. յորոյ վերայ ուղղիչն յաւելու ի:

⁽¹⁾ Յիշատակարանս այս կարմրաղեղով գրեալ:
⁽²⁾ Օր. գրեալ ունէր՝ Նիկոմեա, ի ներքոյ տո-
ղին յաւելու ուղղիչն սեւաղեղով՝ իղ:
⁽³⁾ Այսպէս յօր.:
⁽⁴⁾ Օր. գրէ՝ Նիկոմիդեա:
⁽⁵⁾ Վերջին երկորին տողսս ի ներքոյ մարութ մանր
բոլորգրով եւ սեւաղեղով գրեալ:

ՈՒՂՂԵԼԻՔ

Ի նախընթաց Ասացուածս Ս. Եփրեմի
ԺԱ. ԺԲ. ԺԳ. և ԺԴ.

- Էջ 184 ր. տ. 8 ի ներքուստ ընթ. Այսպիսի
» » » » 6 » » սի ջնջելի է
» 185 ր. տ. 25 ի վերուստ ընթ. նի փխկ-
նայնի
» 188 ա. տ. 2 ի ներք. [յ] ջնջելի է
» » ր. » 13 ի ներք. ընթ. փակի
» 190 ա. ի յիշատակարանի ընթեռնելի է
այսպէս. անտփ խաղաղութեամբ և անց ար-
այտութեան և և ինչից արժանի լիցին
» 222 ր. տ. 8 ի վերուստ զկնի բառիս
ձրի, յաւելի է այս հատած. և զնկզ գերեն
վարձով մեղով: Արք և ճոցս պիտի գերեցին
ձրի,
» 222 ր. տ. 9 ի ներք. ընթ. հոսեցին
» 223 ա. ի ծանօթ (2) ընթ. ուղղին
Էջ 276 ա. տ. 5 ի վեր. ընթ. քառի
» » » » 8 » » » զաւեր
» » » » 18 » » » անհասկացան
» » ր. » 8 » » » յաճախ մեկ
» » » » 17 » » » զկնի բառիս ի զը-
լուիս զնելի է վերջակէտ
» » » » 17 ի ներք. ընթ. ի ցատումն
» » » » 2 » » » զկնի բառիս հարսն
յաւելի է անտեղ
» 277 ա. տ. 7 ի վեր. պիտի քիւրի
» » » » 21 » » » վերջին
» » » » 23 ի ներք. ընթ. քիւր
» » » » 16 » » » զկնի մի յաւելի է
լիցին
» » ր. » 7 ի վեր. ընթ. զհարուստ
» 278 ա. տ. 1 ի վեր. ընթ. սղի
» » » » 4 » » » Արդարեւ
» » » » 7-8 » » » ընտանեալ ք
» » » » 9 » » » ընչիս
» » » » 22 ի ներք. զկնի բառիս
զհանդարեալն զնելի է ստորակէտ
» » » » 21 ի ներք. զկնի բառիս
զյարմարեալն զնելի է ստորակէտ
» » » » 19 » » » յառաջքան զբառն
կանալ զնելի է ստորակէտ
» » » » 2 » » » ընթ. ցին
» » ր. » 20 » » » ուղղելի յաղարս
» 279 ա. տ. 24 ի վեր. ընթ. միսիսարու-
րեալն

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

1929-ը կը վերջանայ Հայ ժողովուրդի ծոցէն կոր-
զելով երկու մտաւորականներուն ալ կեանքը:

Ժամանակագրական կարգով ասոնց առաջինն է
Տիար Մուշեղ Վայկունի (Տօրթ. Փիլիսոփայութեան),
որ վախճանած է Պրբրի (ՍանՖրանչիսկօ) իր բարձ-
րահայեաց «Գիտական երկանց Վայկունի» մէջ և
թաղուած Հիւմ. 16 ին:

Կ'արժէ որ խնամքով գրուի այս հայ գիտունին
կենսագրութիւնը: Տիար մըն էր Տրթ. Վայկունի
իրբեւ գիտուն: Հակառակ իր շատ փափուկ կուրծ-
րին, միշտ կը խորճէր ու կը խուզարկէր: Քրիէն
մինչեւ Պրբրիի համալսարանը, ահուկի զժուարու-
թիւններու յաղթելով կերտած էր ինքզինքը: Խորա-
պէս գիտնական միտք մը, որ զանձ մը եղաւ իրեն հա-
մար. իր գիտութիւնը բարեկեցիկ վիճակ մը առա-
հովեց իրեն: Պրբրիի բարձունքին վրայ շինեց իր
տունը և աշխատանոցը. կը առաջին գիտք Թաւ-
թաւքէ Էսթան է, զոր կործմ հանեց խաղողի թի-
նէն, և վերջերս ալ բրած է զիւտ մը, Էլէքթրիք
Էէֆրէէրէյթրի մէկ տեսակը: Վայկունի կ'իյնայ
գիտական խուզարկութեան պատէշին վրայ, 49
տարեկան երկար տան ամուրի տարեցաւ: Եւսոյ
ամուսնացաւ Ամերիկոսի մը հետ:

Տիրած էր անգլիերէն լեզուին, շատ լաւ գիտէր
Ֆրանսերէնը: Սրտանց կը սիրէր իր ազգը. կը պաշ-
տէր հայ լեզուն, հայութեան արժանապատուութիւ-
նը կը խանդավառէր զինքն: Սիրահարն էր իր Մայ-
րենի եկեղեցւոյն: Ամէն գիտնական սիրուն տարօրի-
նակութիւն մը կ'ունենայ: Տրթ. Վայկունին ալ ունէր
տարօրինակութիւն մը հայերէն գրելու: 21-ը սիրեր
մեր արդի աշխարհագրքը, թիւրքերէն տեսնելով ա-
տոր մէջ, թէ և կը խօսէր զայն: «Գրարար» կ'ըսէր
կ'երթար. բայց իր «գրարար» չէր պատկաներ հայ
մտանագրութեան ունէ շրջանին: Այնպէս կը մտա-
ծէր թէ հայերէնը գրուելու էր անգլիերէնի կամ
Ֆրանսերէնի թերականութեամբ: «The Raven»-ը
և Այլ թերթուածք ինչ» գործը (Տպգր. Միլիթարեան,
Վիեննա), զոր հրատարակեց «Վասն-Հայրենեաց»,
կը բովանդակէ իր վարդապետութիւնը հայերէնի մա-
սին: Այս գործը յաշարման մըն է տարօրինակու-
թեան, որ կը վիայէ իր գիտնականի խուզարկու-
մարին, իր համոզումներուն անկեղծութեան, իր
խիռ երգիծանքին, իր վերացականութեան, և իր
զազափարատաշատ ու պարկեշտ հայորդիի նկարագրին:
Վայկունին չի հաւնիր մեր արդի աշխարհագրքը,
իրբեւ թիւրքերէնով աղճատուած հայերէն, բայց
ինքն իր այս գործին մէջ ուղղակի կը գործածէ
թիւրքերէն բառեր, ասացումներ, ուժգնութիւն և
յատակութիւն տալու համար իր քննադատական ու
երգիծական արտայայտութեանց:

Բ.

Երկրորդն է Համբարձում Երամեան, մարմնի աշ-
քերէն գուրկ, բայց մտքի աչքերով սրտան, ուսու-